

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում

«02» դեկտեմբերի 2008թ.

Կենտրոնական բանկի նախագահ  
Արթուր Զավադյան

Նոր խմբագրությամբ գրանցվել է  
«06» փետրվարի 2013թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ և  
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆՈՂ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ  
ԿԱՐԳ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

## **ԲԱԺԻՆ 1 . ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Գլուխ 1. Կանոնակարգի գործողության շրջանակը**

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերին և ֆինանսական գործիքներին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Կենտրոնական Դեպոզիտարիա) կողմից արժեթղթերի միջազգային տարբերակիչ և արժեթղթերի նույնականացնող ծածկագրեր շնորհելու կարգը:
2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1), 2), 3), 4), 7) կետերով սահմանված արժեթղթերի վրա:

### **Գլուխ 2. Հասկացություններ**

3. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
  - 3.1. **«Թողարկող».** իրավաբանական անձ, որի կողմից թողարկվել և տեղաբաշխվել են արժեթղթերը:
  - 3.2. **«Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր կամ ԱՄՏԾ»** միջազգային տարբերակիչ ծածկագիր, որը շնորհվում է արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին՝ սույն կարգի, ISO 6166 ստանդարտին, «ANNA» ասոցիացիայի (The ASSOCIATION OF NATIONAL NUMBERING AGENCIES) կողմից ԱՄՏԾ-ի շնորհման ուղեցույցի համապատասխան և կարող է օգտագործվել ՀՀ և արտասահմանյան արժեթղթերի շուկայում արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների առուվաճառքի և կառավարման ցանկացած կիրառման դեպքում :
  - 3.3. **«Ֆինանսական գործիքների դասակարգման ծածկագիր կամ CFI ծածկագիր»** CFI ծածկագիրը արտացոլում է ֆինանսական գործիքների առանձնահատկությունները, որոնք սահմանվում են ֆինանսական գործիքների թողարկման որոշմամբ և մնում են անփոփոխ վերջիններիս շրջանառության ողջ ժամկետի ընթացքում և շնորհվում է ISO 10962 ստանդարտին համապատասխան:
  - 3.4. **«Արժեթղթերի նույնականացնող ծածկագիր»** նույնականացնող ծածկագիր, որը շնորհվում է արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին սույն կարգի համաձայն և որը կարող է օգտագործվել միայն ՀՀ արժեթղթերի շուկայում այդ արժեթղթերով իրականացվող գործառույթների ծրագրային գրանցումը ապահովելու նպատակով:
  - 3.5. Սույն կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված նշանակությունները:

**ԲԱԺԻՆ 2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Գլուխ 3. Արժեթյաթերին շնորհվող միջազգային տարբերակիչ ծածկագրի կառուցվածքը և կազմման մեթոդները**

4. Արժեթյաթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը բաղկացած է երեք մասերից՝ երկրի ծածկագրից (երկու նիշ), հիմնական համարից (ինը նիշ) և ստուգիչ թվից (մեկ նիշ): ԱՄՏԾ-ի նիշերը համարակալվում են ձախից աջ:

5. ԱՄՏԾ-ն ունի հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 1

Երկրի ծածկագիր	Հիմնական համար				Ստուգիչ թիվ
	Թողարկողի ծածկագիր	Արժեթյաթերի տեսակ	Արժեթյաթերի էական հատկանիշներ	Թողարկողի գտնվելու վայրը (ըստ մարզերի)	
X <sub>1</sub> X <sub>2</sub>	X <sub>3</sub> X <sub>4</sub> X <sub>5</sub> X <sub>6</sub>	X <sub>7</sub>	X <sub>8</sub> X <sub>9</sub>	X <sub>10</sub> X <sub>11</sub>	X <sub>12</sub>

6. ԱՄՏԾ-ում օգտագործվում են լատինական այբուբենի մեծատառերը և արաբական թվանշանները:

7. ԱՄՏԾ-ի առաջին և երկրորդ նիշերը՝ X<sub>1</sub>X<sub>2</sub>-ը, արտահայտում են Հայաստանի Հանրապետության միջազգային ծածկագիրը՝ «AM»:

8. ԱՄՏԾ-ի երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ նիշերը՝ X<sub>3</sub>X<sub>4</sub>X<sub>5</sub>X<sub>6</sub>-ը, լատինական տառերով արտահայտված թողարկողի տարբերակիչ ծածկագիրն է, որը կազմվում է թողարկողի անվանման մեջ ներառված տառերին համապատասխան:

9. ԱՄՏԾ-ի յոթերորդ նիշը X<sub>7</sub>-ը սահմանում է արժեթյաթերի տեսակը.

- 9.1. „S,, հասարակ անվանական բաժնետոմսերի համար,
- 9.2. „P,, արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար,
- 9.3. „B,, պարտատոմսերի համար
- 9.4. „H,, այլ տեսակի արժեթյաթերի համար:

10. ԱՄՏԾ-ի ութերորդ և իններորդ նիշերը՝ X<sub>8</sub>X<sub>9</sub>-ը, Դեպոզիտարիայի կողմից որոշվող թվային կամ տառային ծածկագրեր են, որոնք լրացվում են ելնելով սուբյեկտներին արժեթյաթերով հավաստվող իրավունքների պատկանելիության սկզբունքից և տվյալ տեսակի արժեթյաթերի էական հատկանիշներից (անվանական արժեքից, արժեթյաթերով հավաստվող իրավունքների ծավալից, ժամկետայնությունից և այլն), մասնավորապես.

10.1. հասարակ անվանական բաժնետոմսերի համար՝ 10

10.2. արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար.

10.2.1. X<sub>8</sub> նիշը սահմանում է արտոնյալ անվանական բաժնետոմսերի տեսակը, մասնավորապես.

- 1) հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ K
- 2) փոփոխական շահութաբաժնով արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ C
- 3) կուտակման արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ A

- 4) փոխարկելի արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ **E**  
 5) այլ տեսակի արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ **D**
- 10.2.2.  $X_9$  նիշը սահմանում է թողարկման հերթական համարը՝ 1-ից մինչև 9-րդ թողարկումների համար **1-ից 9-ը** թվանշանները, իսկ 10-րդ թողարկումից սկսած լատինական այբուբենի տառերը՝ **A,B, C** և այլն:
- 10.3. Պարտատոմսերի համար՝  
 10.3.1.  $X_8$  նիշը սահմանում է ժամկետայնությունը, մասնավորապես.  
 1) մինչև 3 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ **3**  
 2) 3-ից 6 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ **6**  
 3) 6-ից 9 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ **9**  
 4) 9-ից 12 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ **1**  
 5) 12 ամսից ավելի մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ **2**
- 10.3.2.  $X_9$  նիշը սահմանում է թողարկման հերթական համարը՝ 1-ից մինչև 9-րդ թողարկումների համար **1-ից 9-ը** թվանշանները, իսկ 10-րդ թողարկումից սկսած լատինական այբուբենի տառերը՝ **A,B, C** և այլն:
- 10.4. Այլ տեսակի արժեթղթերի համար՝  $X_8X_9$ -ը նիշերը սահմանում են թողարկման հերթական համարը:
11. ԱՄՏԾ-ի տասներորդ և տասնմեկերորդ նիշերը՝  $X_{10}X_{11}$ -ը, արժեթղթերի ռեզիդենտ թողարկողի գտնվելու վայրի տարածաշրջանն արտահայտող Հայաստանի Հանրապետության մարզերի ծածկագիրն է (ըստ աղյուսակ 2-ի):

Աղյուսակ 2: Հայաստանի Հանրապետության մարզերի ծածկագրերը

Արագածոտն	AG	Լոռի	LO
Արարատ	AR	Շիրակ	SH
Արմավիր	AV	Սյունիք	SU
Գեղարքունիք	GR	Վայոց Ձոր	VD
Երևան	ER	Տավուշ	TV
Կոտայք	KT		

12. ԱՄՏԾ-ի տասներկուերորդ նիշը՝  $X_{12}$ -ը, ստուգիչ թիվն է: ԱՄՏԾ-ի ստուգիչ թիվը հաշվարկվում է ԱՄՏԾ-ի նախորդ նիշերի լրացումից հետո՝ չորս հաջորդական քայլերով: Քայլերի հերթականությունը հետևյալն է՝

Քայլ 1: ԱՄՏԾ-ում տառային նիշերը փոխարինվում են համապատասխան թվերով՝ Աղյուսակ 3-ին համապատասխան:

Աղյուսակ 3

0=0	6=6	C=12	I=18	O=24	U=30
1=1	7=7	D=13	J=19	P=25	V=31
2=2	8=8	E=14	K=20	Q=26	W=32
3=3	9=9	F=15	L=21	R=27	X=33
4=4	A=10	G=16	M=22	S=28	Y=34
5=5	B=11	H=17	N=23	T=29	Z=35

Ստացված շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 2: Յուրաքանչյուր թիվը բազմապատկվում է համապատասխան գործակցով: Շարքի կենտ դիրքերում գտնվող թվերի համար գործակիցը 2 է, զույգ դիրքերում գտնվող

թվերի համար՝ 1: Շարքում նիշերի դիրքերի հաշվառումը կատարվում է աջից ձախ:

Քայլ 3: Նախորդ քայլում ստացված շարքի բոլոր թվերը գումարվում են:

Կրկին, շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 4: Եթե հանրագումարի արդյունքում ստացված թիվը բազմապատիկ է տասին, ապա ստուգիչ թիվը «0» է: Այլապես, ստուգիչ թիվը հաշվարկվում է, երրորդ փուլում ստացված թիվը հանելով այդ թվից մեծ և տասին բազմապատիկ թվերից ամենափոքր թվից:

#### **ԳԼՈՒԽ 4. Ֆինանսական գործիքների դասակարգման ծածկագրի (CFI ծածկագրի) շնորհման սկզբունքները**

13. ԱՄՏԾ-ի շնորհման հետ միաժամանակ արժեթղթերին և ֆինանսական գործիքներին Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից շնորհվում է ֆինանսական գործիքների դասակարգման՝ CFI ծածկագիր, որն արտացոլում է արժեթղթերի և ֆինանսական գործիքների թողարկման որոշմամբ սահմանված հատկանշական առանձնահատկությունները:

14. CFI ծածկագիրը գործում է միայն արժեթղթերին և ֆինանսական գործիքներին շնորհված ԱՄՏԾ-ի հետ մեկտեղ և չի կարող օգտագործվել ԱՄՏԾ-ից առանձին:

15. Համաձայն ISO 10962 ստանդարտի CFI ծածկագիրը կազմված է վեց տառային բնութագրիչներից: Առաջին նիշը արտահայտում է դասակարգման և տարբերակման բարձրագույն մակարդակը 6 դասակարգիչների միջև՝ **1-բաժնետոմսեր-E-Equities, 2-պարտքային գործիքներ -D-Debt, 3-իրավունք հավաստող փաստաթղթեր -R-Entitlements, 4-օպցիոններ-O-Options, 5-ֆյուչերներ-F-Futures-, 6-այլ-M-Others:** Երկրորդ նիշը արտահայտում է յուրաքանչյուր դասակարգիչի հատկանշական խումբը: Վերջին 4 նիշերը բնութագրում են յուրաքանչյուր խմբի առավել կարևոր բնութագրիչները, այնպիսին ինչպիսիք են ձայնի իրավունքը, սահմանափակումները, վճարման կարգավիճակը և ձևը, որոնք օգտակար տեղեկատվություն են բաժնետոմսերի դեպքում: Բաժնետոմսերի, պարտքային գործիքների և նպաստների համար 6-րդ վերջին նիշը արտահայտում է գործիքի ձևը:

16. Սույն գլխի 15-րդ կետում նշված բաժնետոմսերի և պարտատոմսերի բնութագրիչների դասակարգումը և CFI ծածկագրի շնորհումը իրականացվում է սույն կարգի «Հավելված-3ե-ում ներկայացված դասակարգիչների համաձայն:

#### **ԳԼՈՒԽ 5. ԱՄՏԾ-ի շնորհման ընթացակարգը**

17. Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ԱՄՏԾ-ն շնորհվում է.

17.1. Հայաստանի Հանրապետությունում գրանցված Թողարկողների կողմից թողարկված և տեղաբաշխված յուրաքանչյուր դասի արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին,

17.2. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում պարտադիր թույլտվությամբ շրջանառության ենթակա տեղաբաշխված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին՝ ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում առևտրին թույլտվության (ցուցակման) պահից;

17.3. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում շրջանառվող արժեթղթերի լրացուցիչ թողարկման արդյունքում տեղաբաշխված

արժեթղթերին՝ ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում առևտրին թույլտվության (ցուցակման) պահից:

18. ԱՄՏԾ-ի շնորհման համար Թողարկողը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային՝ Հաշվի օպերատորի միջնորդությամբ ներկայացնել համապատասխան կարգով լրացված ԱՄՏԾ-ի շնորհման հայտ (Հավելված 1)՝ 2 օրինակից:

19. Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ԱՄՏԾ-ն շնորհվում է ԱՄՏԾ-ի շնորհման հայտը ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

20. Թողարկողը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային վճարել յուրաքանչյուր շնորհված ԱՄՏԾ-ի համար Կենտրոնական Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված չափով:

## **Գլուխ 6. ԱՄՏԾ-ի գործողության ժամկետը**

20. ԱՄՏԾ-ն շնորհվում է արժեթղթերի շրջանառության ժամկետով:

21. ԱՄՏԾ-ի գործողությունը կարող է դադարեցվել հետևյալ դեպքերում.

21.1. Արժեթղթերի շրջանառությունից դուրս գալու դեպքում,

21.2. Թողարկողի լուծարման, վերակազմակերպման դեպքում,

21.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

22. ԱՄՏԾ շնորհված արժեթղթերի վերաբերյալ գրանցված տեղեկությունների փոփոխության դեպքում Թողարկողը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել այդ փոփոխությունների վերաբերյալ Հաշվի օպերատորին՝ ներկայացնելով ԱՄՏԾ-ի շնորհման հայտի փոփոխված տարբերակը: Հաշվի օպերատորը ԱՄՏԾ-ի շնորհման հայտի փոփոխված տարբերակը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային ներկայացնել անմիջապես՝ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով, իսկ փաստաթղթային տարբերակը Կենտրոնական Դեպոզիտարիա փոխանցել տվյալ ամսվա վերջին:

## **Գլուխ 7. Շնորհված ԱՄՏԾ-ների տեղեկատվական բազայի կառավարումը (վարումը) և հրապարակումը**

23. Կենտրոնական Դեպոզիտարիան պարտավոր է.

23.1. ԱՄՏԾ-ի շնորհման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

1) Թողարկողին հաշվի օպերատորի միջոցով վերադարձնել ԱՄՏԾ-ի շնորհման հայտի մեկ օրինակը, որի մեջ համապատասխան դաշտերում լրացված են արժեթղթերի Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից շնորհված ԱՄՏԾ և CFI ծածկագրերը: ԱՄՏԾ-ի շնորհման հայտի հանձնումը թողարկողին համարվում է ԱՄՏԾ և CFI ծածկագրերի շնորհման ծանուցում, որը Հաշվի օպերատորի միջնորդությամբ կարող է հանձնվել թողարկողին՝ առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով,

2) Թողարկողի արժեթղթերի ԱՄՏԾ-ի վերաբերյալ տվյալները գրանցել «ANNA» ասոցիացիայի կայքի համապատասխան բաժնում

3) Շնորհված ԱՄՏԾ-ն հրապարակել Կենտրոնական Դեպոզիտարիայի կայքում:

23.2. ԱՄՏԾ-ի դադարելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

1) այդ մասին ծանուցել Թողարկողին կամ Հաշվի օպերատորին, ծանուցման մեջ նշելով ԱՄՏԾ-ի դադարելու պատճառները: Ծանուցումը կարող է հանձնվել առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով,

- 2) «ANNA» ասոցիացիայի կայքի համապատասխան բաժնից հեռացնել Թողարկողի արժեթղթերի ԱՄՏԾ-ի վերաբերյալ տվյալները:
- 3) Կենտրոնական Դեպոզիտարիայի կայքում փոխել դադարեցված ԱՄՏԾ-ի կարգավիճակը:

**Գլուխ 8. ԱՄՏԾ-ի օգտագործումը**

24. ԱՄՏԾ-ն կարող է օգտագործվել ոչ միայն ՀՀ, այլ նաև արտասահմանյան արժեթղթերի շուկայում արժեթղթերի և այլ ֆինանսական գործիքների առուվաճառքի և կառավարման ցանկացած կիրառման դեպքում :
25. Մինևսյն ԱՄՏԾ-ի կրկնակի շնորհումը այլ արժեթղթերի նույնականացման համար թույլատրվում է միայն տվյալ ԱՄՏԾ-ի դադարեցումից 10 տարի հետո, իսկ կարճաժամկետ ֆինանսական գործիքների դեպքում՝ դրանց մարման ժամկետի ավարտից 1 տարի հետո:

**ԲԱԺԻՆ 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆՈՂ ԾԱԾԿԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Գլուխ 9. Արժեթղթերին շնորհվող նույնականացնող ծածկագրի կառուցվածքը և կազմման մեթոդները**

26. Արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը (այսուհետ՝ ԱՆԾ) ունի հետևյալ կառուցվածքը.  
Աղյուսակ 1

00	Հիմնական համար				Ստուգիչ թիվ
	Թողարկողի ծածկագիր	Արժեթղթերի տեսակ	Արժեթղթերի էական հատկանիշներ	Թողարկողի գտնվելու վայրը (ըստ մարզերի)	
X <sub>1</sub> X <sub>2</sub>	X <sub>3</sub> X <sub>4</sub> X <sub>5</sub> X <sub>6</sub>	X <sub>7</sub>	X <sub>8</sub> X <sub>9</sub>	X <sub>10</sub> X <sub>11</sub>	X <sub>12</sub>

27. ԱՆԾ-ում օգտագործվում են լատինական այբուբենի մեծատառերը և արաբական թվանշանները:
28. ԱՆԾ-ի առաջին և երկրորդ նիշերի համար օգտագործվում է «00»:
29. ԱՆԾ-ի 3-ից 12-րդ նիշերը ներառյալ սահմանվում են սույն կանոնակարգի 8-ից 12-րդ կետերով սահմանված նշանակություններին համապատասխան:

**Գլուխ 10. ԱՆԾ-ի շնորհման ընթացակարգը**

30. Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ԱՆԾ կարող է շնորհվել հետևյալ արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին.
  - 30.1. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում պարտադիր թույլտվությամբ շրջանառության ենթակա թողարկված, սակայն չտեղաբաշխված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին;
  - 30.2. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպված շուկայում շրջանառվող արժեթղթերի լրացուցիչ թողարկման արդյունքում տեղաբաշխված, սակայն դեռ չցուցակված արժեթղթերին,
  - 30.3. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված այն թողարկողների կողմից թողարկված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին, որոնց հաշվետերերի ռեեստրավարումը իրականացվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից

հաշվի օպերատորի միջնորդությամբ վերջինիս հետ կնքված ռեեստրի վարման պայմանագրի հիման վրա:

31. ԱՆԾ-ի շնորհման համար Թողարկողը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային Հաշվի օպերատորի միջոցով ներկայացնել համապատասխան կարգով լրացված ԱՆԾ-ի շնորհման հայտ (Հավելված 2)՝ 2 օրինակից:

32. Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ԱՆԾ-ն շնորհվում է ԱՆԾ-ի շնորհման հայտը ստանալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

33. Թողարկողը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային վճարել յուրաքանչյուր շնորհված ԱՆԾ-ի համար Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված չափով:

### **Գլուխ 11. ԱՆԾ-ի գործողության ժամկետը**

34. Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից ԱՆԾ-ն շնորհվում է

34.1. 30.1. կետով սահմանված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին մինչև ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակարպված շուկայում այդ արժեթղթերի ցուցակման արդյունքում դրանց ԱՄՏԾ-ի շնորհման պահը;

34.2. 30.2. կետով սահմանված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին մինչև ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակարպված շուկայում այդ արժեթղթերի ցուցակման արդյունքում դրանց ԱՄՏԾ-ի շնորհման պահը;

34.3.30.3. կետով սահմանված արժեթղթերին և այլ ֆինանսական գործիքներին Թողարկողի և Կենտրոնական Դեպոզիտարիայի միջև կնքված ռեեստրի վարման պայմանագրի գործողության կամ դրանց շրջանառության ժամկետով:

35. ԱՆԾ-ի գործողությունը կարող է դադարեցվել հետևյալ դեպքերում.

35.1. Տվյալ արժեթղթերին ԱՄՏԾ-ի շնորհման պահից

35.2. Արժեթղթերի շրջանառությունից դուրս գալու դեպքում,

35.3. Անվանական արժեթղթերի ռեեստրի վարման պայմանագրի ժամկետի ավարտի կամ լուծման դեպքում,

35.4. Թողարկողի լուծարման, վերակազմակերպման դեպքում,

35.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

36. ԱՆԾ շնորհված արժեթղթերի վերաբերյալ գրանցված տեղեկությունների փոփոխության դեպքում Թողարկողը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հաշվի օպերատորին, ներկայացնելով ԱՆԾ-ի շնորհման հայտի փոփոխված տարբերակը: Հաշվի օպերատորը ԱՆԾ-ի շնորհման հայտի փոփոխված տարբերակը պարտավոր է Կենտրոնական Դեպոզիտարիային ներկայացնել անմիջապես՝ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցի միջոցով, իսկ փաստաթղթային տարբերակը Կենտրոնական Դեպոզիտարիա փոխանցել 1 աշխատանքային օրվա ընթացքում:

### **Գլուխ 12. Շնորհված ԱՆԾ-ների տեղեկատվական բազայի կառավարումը (վարումը) և հրապարակումը**

37. Կենտրոնական Դեպոզիտարիան պարտավոր է.

37.1. ԱՆԾ-ի շնորհման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

1) Թողարկողին, հաշվի օպերատորի միջոցով, վերադարձնել ԱՆԾ-ի շնորհման հայտի մեկ օրինակը, որի մեջ համապատասխան դաշտում լրացված է



արժեթղթերին Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից շնորհված ԱՆԾ-ն: ԱՆԾ-ի շնորհման հայտի հանձնումը թողարկողին համարվում է ԱՆԾ-ի շնորհման ծանուցում, որը Հաշվի օպերատորի միջնորդությամբ կարող է հանձնվել թողարկողին՝ առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով,

2) Թողարկողի արժեթղթերին շնորհված ԱՆԾ-ի վերաբերյալ տվյալները պահպանել Կենտրոնական Դեպոզիտարիայի համապատասխան բաժնում:

37.2. ԱՆԾ-ի դադարելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.

1) այդ մասին ծանուցել Թողարկողին կամ Հաշվի օպերատորին, ծանուցման մեջ նշելով ԱՆԾ-ի դադարելու պատճառները: Ծանուցումը կարող է հանձնվել առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով:

2) Դադարեցված ԱՆԾ-ի վերաբերյալ տվյալները պահպանել Կենտրոնական Դեպոզիտարիայի ԱՆԾ-ների ընդհանուր տեղեկատվական բազայում:

### **Գլուխ 13. ԱՆԾ-ի օգտագործումը**

38. ԱՆԾ-ն կարող է օգտագործվել միայն ՀՀ արժեթղթերի շուկայում այդ արժեթղթերով իրականացվող գործառույթների ծրագրային գրանցումը ապահովելու նպատակով:

### **ԲԱԺԻՆ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

39. Սույն կանոնները նոր խմբագրությամբ ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ Կենտրոնական Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված օրը՝ սույն կանոնների նոր խմբագրությամբ նախատեսված փոփոխությունների կիրարկումն ապահովող բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի ստորագրումից հետո:

40. Սույն կարգի դրույթները չեն տարածվում դրա գրանցման պահի դրությամբ Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից արդեն իսկ ԱՏԾ շնորհված արժեթղթերի վրա՝ եթե Օրենքով այլ բան սահմանված չէ:

**Հաստատված է**

**«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ  
դիտորդ խորհրդի որոշմամբ**

\_\_\_\_\_ **Կոնստանտին Սարոյան**

**«08» Նոյեմբերի 2012թ.  
ք. Երևան**

**Լրացվում է Թողարկողի կողմից**

<b>Նոր ԱՄՏԾ-ի շնորհում</b> <input type="checkbox"/>		
<b>Արդեն շնորհված ԱՄՏԾ-ի</b> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <b> տվյալների փոփոխություն</b> <input type="checkbox"/>		
Թողարկողի լրիվ անվանումը (հայերեն)		
Թողարկողի լրիվ անվանումը (լատինատառ) (առավելագույնը 255 նիշ)		
Թողարկողի կրճատ անվանումը (լատինատառ) (առավելագույնը 30 նիշ)		
Պետական գրանցման	Երկիր	
	Վկայականի համարը և սերիան	
	Համարը	
	Գրանցման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	
Թողարկողի գրանցման հասցեն		
Թողարկողի գտնվելու վայրը		
Թողարկողի կապի միջոցները	<input type="checkbox"/> հեռախոս <input type="checkbox"/> էլ. փոստ	
Թողարկված արժեթղթերի տեսակի (դասի) լրիվ անվանումը		
Արժեթղթերով հավաստվող իրավունքները	<input type="checkbox"/> քվեարկելու իրավունք <input type="checkbox"/> այլ (նշել)	
Արժեթղթերի թողարկման ձևը	<input type="checkbox"/> Փաստատթղթային <input type="checkbox"/> Ոչ փաստատթղթային	
Պարտատոմսերի երաշխավորվածությունը	<input type="checkbox"/> պետական երաշխավորություն <input type="checkbox"/> երաշխավորված <input type="checkbox"/> ապահովված <input type="checkbox"/> չապահովված/չերաշխավորված	
Արժեթղթերի ձեռքբերման և փոխանցման սահմանափակումներ (առկայության դեպքում)		
Արժեթղթերի վճարման կարգավիճակը	<input type="checkbox"/> չվճարված <input type="checkbox"/> մասնակի վճարումներ <input type="checkbox"/> լրիվ վճարված	
Տվյալ դասի անվանական արժեթղթերի թողարկման հերթական համարը		
Թողարկված արժեթղթերի թողարկման արժույթը		

Անվանական արժեքը	
Տվյալ թողարկման շրջանակներում տեղաբաշխված արժեթղթերի քանակ	
Պարտատոմսերի համար սահմանված տոկոսադրույքի տեսակը	<input type="checkbox"/> ֆիքսված <input type="checkbox"/> զեղչատոկոսային <input type="checkbox"/> փոփոխական
Արտոնյալ բաժնետոմսերի եկամտաբերության՝ շահութաբաժինների վճարման տեսակը	
Տոկոսադրույքի չափը (000,000000 %)	
Տոկոսադրույքի վճարման հաճախականությունը (2 տարին մեկ, տարեկան, կիսամյակային, եռամսյակային, ամսական, շաբաթական, չկիրառելի, այլ)	
Տոկոսադրույքի առաջին վճարման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Թողարկված արժեթղթերի շրջանառության ժամկետը (տարի, ամիս)	
Արժեթղթերի մարման պայմանները	
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	

**Լրացման ամսաթիվը** «\_\_\_\_\_ Ե \_\_\_\_\_ 20 թ.

\_\_\_\_\_  
*Թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը և ԱԱՀ-ն*

*ստորագրությունը*  
**Կ.Տ.**

**Լրացվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից**

Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը														
CFI ծածկագիր														
Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագրի գործողության ժամկետը														

\_\_\_\_\_  
*Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը և ԱԱՀ-ն*

*ստորագրությունը*  
**Կ.Տ.**

**Լրացվում է Թողարկողի կողմից**

<b>Նոր ԱՆԾ-ի շնորհում</b> <input type="checkbox"/>	
<b>Արդեն շնորհված ԱՆԾ-ի</b> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <b> տվյալների փոփոխություն</b> <input type="checkbox"/>	
Թողարկողի լրիվ անվանումը (հայերեն)	
Թողարկողի լրիվ անվանումը (լատինատառ) (առավելագույնը 255 նիշ)	
Թողարկողի կրճատ անվանումը (լատինատառ) (առավելագույնը 30 նիշ)	
Պետական գրանցման	Երկիր
	Վկայականի համարը և սերիան
	Համարը
	Գրանցման ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Թողարկողի գրանցման հասցեն	
Թողարկողի գտնվելու վայրը	
Թողարկողի կապի միջոցները	<input type="checkbox"/> հեռախոս <input type="checkbox"/> Էլ. փոստ
Թողարկված արժեթղթերի տեսակի (դասի) լրիվ անվանումը	
Արժեթղթերով հավաստվող իրավունքները	<input type="checkbox"/> քվեարկելու իրավունք <input type="checkbox"/> այլ (նշել)
Արժեթղթերի թողարկման ձևը	<input type="checkbox"/> Փաստաթղթային <input type="checkbox"/> Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի երաշխավորվածությունը	<input type="checkbox"/> պետական երաշխավորություն <input type="checkbox"/> երաշխավորված <input type="checkbox"/> ապահովված <input type="checkbox"/> չապահովված/չերաշխավորված
Արժեթղթերի ձեռքբերման և փոխանցման սահմանափակումներ (առկայության դեպքում)	
Արժեթղթերի վճարման կարգավիճակը	<input type="checkbox"/> չվճարված <input type="checkbox"/> մասնակի վճարումներ <input type="checkbox"/> լրիվ վճարված
Տվյալ դասի անվանական արժեթղթերի թողարկման հերթական համարը	
Թողարկված արժեթղթերի թողարկման արժույթը	

Անվանական արժեքը	
Տվյալ թողարկման շրջանակներում տեղաբաշխված արժեթղթերի քանակ	
Պարտատոմսերի համար սահմանված տոկոսադրույքի տեսակը	<input type="checkbox"/> ֆիքսված <input type="checkbox"/> զեղչատոկոսային <input type="checkbox"/> փոփոխական
Արտոնյալ բաժնետոմսերի եկամտաբերության՝ շահութաբաժինների վճարման տեսակը	
Տոկոսադրույքի չափը (000,000000 %)	
Տոկոսադրույքի վճարման հաճախականությունը (2 տարին մեկ, տարեկան, կիսամյակային, եռամսյակային, ամսական, շաբաթական, չկիրառելի, այլ)	
Տոկոսադրույքի առաջին վճարման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Թողարկված արժեթղթերի շրջանառության ժամկետը (տարի, ամիս)	
Արժեթղթերի մարման պայմանները	
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)	

**Լրացման ամսաթիվը** «\_\_\_\_\_ Ե \_\_\_\_\_ 20 թ.

Թողարկողի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը և ԱԱՀ-ն

ստորագրությունը  
Կ.Տ.

**Լրացվում է Կենտրոնական Դեպոզիտարիայի կողմից**

Արժեթղթերի նույնականացնող ծածկագիրը																			
Արժեթղթերի նույնականացնող ծածկագրի գործողության ժամկետը																			

Դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը և ԱԱՀ-ն

ստորագրությունը

Կ.Տ.

**Ֆինանսական գործիքների դասակարգման ծածկագրի շնորհման սկզբունքները  
(Classification of Financial Instruments' CFI)**

**1.1. Դասակարգման կատեգորիաները**

CFI ծածկագիրը դասակարգման կատեգորիաներն են.

- Բաժնետոմսեր- E-Equities**
- պարտքային գործիքներ-D-Debt**
- իրավունք հավաստող փաստաթղթեր-R-Entitlements (Rights)**
- օպցիոններ-O-Options**
- ֆյուչերսներ-F-Futures**
- այլ -M-Others**

**1.1.1. Բաժնետոմսերին CFI ծածկագրի շնորհումը.**

**EQUITIES -E-\*\*-\*\*-\*\*-**

Ֆինանսական գործիքներ, որոնք ներկայացնում են սեփականատիրոջ բաժնեմասը ընկերության կանոնադրական կապիտալում կամ ընդհանուր ակտիվներում:

- Խմբեր՝
- S** = հասարակ բաժնետոմսեր (Shares, i.e. common/ordinary)
  - P** = արտոնյալ բաժնետոմսեր (Preferred shares)
  - C** = փոխարկվող բաժնետոմսեր (Convertible shares)
  - F** = փոխարկվող արտոնյալ բաժնետոմսեր (Preferred convertible shares)
  - M** = այլ /տարբեր/ (Others (Miscellaneous))

**1.1.1.1. Հասարակ բաժնետոմսեր (Shares, i.e. common/ordinary) -E-S-\*\*-\*\*-\*\*-**

**1-ին հարկանիշ: Ձայնի իրավունք (արտահայտում է սեփականատիրոջը տրված ձայնի իրավունքի տեսակը)**

- V** = յուրաքանչյուր բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք (Voting) -E-S-V-\*\*-\*\*-\*\*-
- N** = Բաժնետոմսը չունի ձայնի իրավունք (Non-voting) -E-S-N-\*\*-\*\*-\*\*-
- R** = Բաժնետերերը կարող է ունենալ ավելի քիչ քան մեկ ձայնի իրավունք (Restricted voting) - E-S-R-\*\*-\*\*-\*\*-
- E** = Բաժնետերերը ունի ավելի քան մեկ ձայնի իրավունք (Enhanced voting) -E-S-E-\*\*-\*\*-\*\*-

**2-րդ հարկանիշ- Սեփականության իրավունքը/փոխանցման սահմանափակումներ**

- T** = արժեթղթի սեփականության իրավունքը կամ փոխանցումը հատուկ պայմանների առարկա է (Restrictions) -E-S-\*\*-T-\*\*-\*\*-
- U** = անսահմանափակ՝ արժեթղթի սեփականության իրավունքը կամ փոխանցումը հատուկ պայմանների առարկա չէ (Free) -E-S-\*\*-U-\*\*-\*\*-

### 3-րդ հատկանիշ՝ Վճարման կարգավիճակը

<b>O</b> = վճարում չկա (Nil paid)	-E-S-*-O-*
<b>P</b> = Partly paid (մասնակի վճարումներ)	-E-S-*-P-*
<b>F</b> = Fully paid (լրիվ վճարում)	-E-S-*-F-*

### 4-րդ հատկանիշ : Ձևը

<b>B</b> = ըստ ներկայացնողի ( <b>Bearer</b> )՝ սեփականատերը գրանցված չէ ոչ ռեեստրվարի ոչ էլ թողարկողի գրանցամատյաններում.	-E-S-*-B
<b>R</b> = անվանական ( <b>Registered</b> )՝ արժեթղթերը գրանցված են սեփականատիրոջ անունով թողարկողի կամ թողարկողի ռեեստրավարի գրանցամատյաններում և կարող են փոխանցվել միայն գրանցված սեփականատիրոջ համաձայնության դեպքում	-E-S-*-R
<b>N</b> = արժեթղթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի տակ ( <b>Bearer/Registered</b> )	-E-S-*-N
<b>Z</b> = Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական ( <b>Bearer depository receipt</b> )՝ ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս.	-E-S-*-Z
<b>A</b> = անվանական դեպոզիտար ստացական ( <b>Registered depository receipt</b> )՝ անվանական դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս.	-E-S-*-A

1.1.1.2. Արտոնյալ բաժնետոմսեր (**Preferred shares**)՝ -E-P-\*-\*-\*

### 1-ին հատկանիշ՝ Ձայնի իրավունք

<b>V</b> = յուրաքանչյուր բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք ( <b>Voting</b> )	-E-P-V-*-*-*
<b>N</b> = Բաժնետոմսը չունի ձայնի իրավունք ( <b>Non-voting</b> )	-E-P-N-*-*-*
<b>R</b> = Բաժնետերը կարող է ունենալ ավելի քիչ քան մեկ ձայնի իրավունք ( <b>Restricted voting</b> )	-E-P-R-*-*-*
<b>E</b> = Բաժնետերը ունի ավելի քան մեկ ձայնի իրավունք ( <b>Enhanced voting</b> )	-E-P-E-*-*-*

### 2-րդ հատկանիշ՝ Մարում (**Redemption**)

<b>R</b> = մարվող ( <b>Redeemable</b> )	-E-P-R-*-*-*
<b>E</b> = մարման ժամկետի երկարացման հնարավորություն ( <b>Extendible</b> )	-E-P-E-*-*-*
<b>T</b> = համակցված ( <b>Redeemable/extendible</b> )	-E-P-T-*-*-*

### 3-րդ հատկանիշ՝ Եկամտաբերություն (արտահայտում է սեփականատիրոջը տրված շահութաբաժնից եկամուտ ստանալու իրավունքի տեսակը )

<b>F</b> = հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ ( <b>Fixed Rate Income</b> )՝ Բաժնետերերը պարբերաբար ստանում են հաստատագրված եկամուտ	-E-P-F-*-*-*
---	--------------

**C** = կոմույատիվ, հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ (**Cumulative, Fixed Rate Income**)՝ Բաժնետերերը պարբերաբար ստանում են հաստատագրված գումար: Շահաբաժինները չեն վճարվում ամեն տարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների վճարումը.

-E-P-\*-C-\*

**P** = եկամուտ ըստ մասնակցության (**Participating Income**)՝ Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, ի լրումն նրա, որ ստանում են իրենց ֆիքսված տոկոսով նախնական շահաբաժինները, հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի հետ միասին մասնակցում են նաև հետագա շահաբաժինների բաշխմանը և կապիտալի բաշխմանը

-E-P-\*-P-\*

**Q** = կոմույատիվ, եկամուտ ըստ մասնակցության (**Cumulative, Participating Income**)՝

Որոշակի պայմանների առկայության դեպքում բաժնետերերը իրավունք ունեն ստանալ բացի արտոնյալ եկամուտներից նաև այլ եկամուտներ: Շահաբաժինները չեն վճարվում ամեն տարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների վճարումը

-E-P-\*-Q-\*

**A** = եկամուտների վճարման կարգավորվող տոկոսադրույք (**Adjustable Rate Income**)՝ Շահաբաժնի տոկոսադրույքը սահմանվում է պարբերաբար, սովորաբար հիմնվելով որոշակի եկամտաբերության վրա.

-E-P-\*-A-\*

**N** = եկամուտների սովորական տոկոսադրույք (**Normal Rate Income**)՝ Բաժնետերերը իրավունք ունեն ստանալ նույն տոկոսադրույքով շահաբաժին ինչպես և հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը, սակայն ունեն այլ արտոնություններ, ինչպիսիք են օրինակ լուծարման դեպքում ակտիվների բաշխման առաջնահերթությունը: -E-P-\*-N-\*

#### 4-րդ հարկանիշ՝ Ձևը

**B** = ըստ ներկայացնողի (**Bearer**)՝ Սեփականատերը գրանցված չէ ոչ ռեեստրվարի ոչ էլ թողարկողի գրանցամատյաններում.)

-E-P-\*-B

**R**= անվանական (**Registered**)՝ արժեթղթերը գրանցված են սեփականատիրոջ անունով թողարկողի կամ թողարկողի ռեեստրավարի գրանցամատյաններում և կարող են փոխանցվել միայն գրանցված սեփականատիրոջ համաձայնության դեպքում -E-P-\*-R

**N**= Համակցված (**Bearer/Registered**)՝ արժեթղթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի տակ -E-P-\*-N

**Z**= Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական (**Bearer depository receipt**)՝ ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս

-E-P-\*-Z

**A** = անվանական դեպոզիտար ստացական (**Registered depository receipt**)՝ անվանական դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս.

-E-P-\*-A

#### 1.2.1.3. Փոխարկվող բաժնետոմսեր (**Convertible shares**) -E-C-\*-\*-\*

Հասարակ/սովորական արժեթղթեր, որոնք սեփականատիրոջ ցանկությամբ կարող են փոխարկվել այլ արժեթղթերի համապատասխան փոխարժեքով: Փոխարկման հնարավորությունը կարող է սահմանված լինել անժամկետ կամ սահմանափակված որոշակի ժամկետով:



**1-ին հատկանիշ՝ Ձայնի իրավունք**

- V = յուրաքանչյուր բաժնետիրոջ ունի մեկ ձայնի իրավունք (Voting) -E-C-V-\*\*-\*\*-
- N = Բաժնետիրոջը չունի ձայնի իրավունք (Non-voting ) -E-C-N-\*\*-\*\*-
- R = Բաժնետիրոջը կարող է ունենալ ավելի քիչ քան մեկ ձայնի իրավունք (Restricted voting) -E-C-R-\*\*-\*\*-
- E = Բաժնետիրոջը ունի ավելի քան մեկ ձայնի իրավունք (Enhanced voting) -E-C-E-\*\*-\*\*-

**2-րդ հատկանիշ- Սեփականության իրավունքը/փոխանցման սահմանափակումներ**

- T = արժեթղթի սեփականության իրավունքը կամ փոխանցումը հատուկ պայմանների առարկա է (Restrictions) -E-C-\*\*-T-\*\*-\*\*-
- U = անսահմանափակ (Free (Unrestricted))՝ արժեթղթի սեփականության իրավունքը կամ փոխանցումը հատուկ պայմանների առարկա չէ -E-C-\*\*-U-\*\*-\*\*-

**3-րդ հատկանիշ՝ Եկամտաբերություն** (արտահայտում է սեփականատիրոջը տրված շահութաբաժնից եկամուտ ստանալու իրավունքի տեսակը )

- F = հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ ( **Fixed Rate Income**)՝ բաժնետիրոջը պարբերաբար ստանում են հաստատագրված եկամուտ -E-C-\*\*-F-\*\*-\*\*-
- C = կոմույատիվ, հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ ( **Cumulative, Fixed Rate Income** ) Բաժնետիրոջը պարբերաբար ստանում են հաստատագրված գումար: Շահաբաժինները չեն վճարվում ամեն փարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետիրոջների շահաբաժինների վճարումը. -E-C-\*\*-C-\*\*-\*\*-
- P = եկամուտ ըստ մասնակցության ( **Participating Income** ) Արտոնյալ բաժնետիրոջների սեփականատերերը, ի լրումն նրա, որ ստանում են իրենց ֆիքսված տոկոսով նախնական շահաբաժինները, հասարակ բաժնետիրոջների սեփականատերերի հետ միասին մասնակցում են նաև հետագա շահաբաժինների բաշխմանը և կապիտալի բաշխմանը: -E-C-\*\*-P-\*\*-\*\*-
- Q = կոմույատիվ, եկամուտ ըստ մասնակցության ( **Cumulative, Participating Income**)՝ որոշակի պայմանների առկայության դեպքում բաժնետիրոջը իրավունք ունեն ստանալ բացի արտոնյալ եկամուտներից նաև այլ եկամուտներ: Շահաբաժինները չեն վճարվում ամեն փարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետիրոջների շահաբաժինների վճարումը) -E-C-\*\*-Q-\*\*-\*\*-
- A = եկամուտների վճարման կարգավորվող տոկոսադրույք ( **Adjustable Rate Income** ) Շահաբաժնի տոկոսադրույքը սահմանվում է պարբերաբար, սովորաբար հիմնվելով որոշակի եկամտաբերության վրա. -E-C-\*\*-A-\*\*-\*\*-
- N = եկամուտների սովորական տոկոսադրույք ( **Normal Rate Income** ) Բաժնետիրոջը իրավունք ունեն ստանալ նույն տոկոսադրույքով շահաբաժին ինչպես և հասարակ բաժնետիրոջների սեփականատերերը, սակայն ունեն այլ արտոնություններ, ինչպիսիք են օրինակ լուծարման դեպքում ակտիվների բաշխման առաջնահերթությունը: -E-C-\*\*-N-\*\*-\*\*-

**4-րդ հատկանիշ : Ձևը**

- B = ըստ ներկայացնողի ( **Bearer** ) Սեփականատերը գրանցված չէ ոչ ռեեստրվարի ոչ էլ թողարկողի գրանցամատյաններում. -E-C-\*\*-\*\*-B

**R=** անվանական (**Registered**)՝ արժեթղթերը գրանցված են սեփականատիրոջ անունով թողարկողի կամ թողարկողի ռեեստրավարի գրանցամատյաններում և կարող են փոխանցվել միայն գրանցված սեփականատիրոջ համաձայնության դեպքում -E-C-\*-\*-\***R**

**N=** Համակցված (**Bearer/Registered**)՝ արժեթղթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի տակ. -E-C-\*-\*-\***N**

**Z=** Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական (**Bearer depository receipt**)՝ ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս. -E-C-\*-\*-\***Z**

**A=** անվանական դեպոզիտար ստացական (**Registered depository receipt**)՝ անվանական դեպոզիտար ստացական այն արժեթղթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթղթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթղթերի թողարկման երկրից դուրս -E-C-\*-\*-\***A**

**1.2.1.4. Արտոնյալ փոխարկվող արժեթղթեր ( Preferred convertible shares ) -E-F-\*-\*-\*-**

Արտոնյալ արժեթղթեր (բաժնեմասային/հասարակ), որոնք սեփականատիրոջ ցանկությանը կարող են փոխարկվել այլ արժեթղթերի՝ սահմանված փոխարժեքով, սովորաբար բաժնեմասային արժեթղթերի: Փոխարկման հնարավորությունը կարող է սահմանված լինել անժամկետ կամ սահմանափակված որոշակի ժամկետով:

**1-ին հատկանիշ՝ ձայնի իրավունք**

**V =** յուրաքանչյուր բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք (**Voting**) -E-F-**V**-\*-\*-\*-

**N =** Բաժնետոմսը չունի ձայնի իրավունք (**Non-voting**) -E-F-**N**-\*-\*-\*-

**R =** Բաժնետերերը կարող է ունենալ ավելի քիչ քան մեկ ձայնի իրավունք (**Restricted voting**) -E-F-**R**-\*-\*-\*-

**E =** Բաժնետերերը ունի ավելի քան մեկ ձայնի իրավունք (**Enhanced voting**) -E-F-**E**-\*-\*-\*-

**2-րդ հատկանիշ՝ մարում**

**R =** մարվող (**Redeemable**) -E-F-\*-\***R**-\*-\*-

**E =** մարման ժամկետի երկարացման հնարավորություն (**Extendible**) -E-F-\*-\***E**-\*-\*-

**T =** Համակցված (**Redeemable/extendible**) -E-F-\*-\***T**-\*-\*-

**3-րդ հատկանիշ՝ Եկամտաբերություն** (արտահայտում է սեփականատիրոջը տրված շահութաբաժնից եկամուտ ստանալու իրավունքի տեսակը )

**F =** հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ (**Fixed Rate Income**) Բաժնետերերը պարբերաբար ստանում են հաստատագրված եկամուտ -E-F-\*-\***F**-\*-\*-

**C =** կոմուլյատիվ, հաստատագրված տոկոսադրույքով եկամուտ (**Cumulative, Fixed Rate Income**) Բաժնետերերը պարբերաբար ստանում են հաստատագրված գումար: Շահաբաժինները չեն վճարվում ամեն տարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետոմսերի շահաբաժինների վճարումը. -E-F-\*-\***C**-\*-\*-

**P** = եկամուտ ըստ մասնակցության (**Participating Income**) Արտոնյալ բաժնետիրոջ սեփականատերերը, ի լրումն նրա, որ ստանում են իրենց ֆիքսված տոկոսով նախնական շահաբաժինները, հասարակ բաժնետիրոջ սեփականատերերի հետ միասին մասնակցում են նաև հետագա շահաբաժինների բաշխմանը և կապիտալի բաշխմանը -E-F-\*-P\*-

**Q** = կոմույատիվ, եկամուտ ըստ մասնակցության (**Cumulative, Participating Income**) Որոշակի պայմանների առկայության դեպքում բաժնետերերը իրավունք ունեն ստանալ բացի արտոնյալ եկամուտներից նաև այլ եկամուտներ: Շահաբաժինները չեն վճարվում ամեն փարի, այլ հավաքագրվում են և պետք է վճարված լինեն ավելի ուշ մինչև հասարակ բաժնետիրոջ շահաբաժինների վճարումը -E-F-\*-Q\*-

**A** = եկամուտների վճարման կարգավորվող տոկոսադրույք (**Adjustable Rate Income**) Շահաբաժնի տոկոսադրույքը սահմանվում է պարբերաբար, սովորաբար հիմնվելով որոշակի եկամտաբերության վրա. -E-F-\*-A\*-

**N** = եկամուտների սովորական տոկոսադրույք (**Normal Rate Income**) Բաժնետերերը իրավունք ունեն ստանալ նույն տոկոսադրույքով շահաբաժին ինչպես և հասարակ բաժնետիրոջ սեփականատերերը, սակայն ունեն այլ արտոնություններ, ինչպիսիք են օրինակ լուծարման դեպքում ակտիվների բաշխման առաջնահերթությունը -E-F-\*-N\*-

#### 4-րդ հատկանիշ : Ձևը

**B** = ըստ ներկայացնողի (**Bearer**)՝ Սեփականատերը գրանցված չէ ոչ ռեեստրվարի ոչ էլ թողարկողի գրանցամատյաններում. -E-F-\*-B

**R**= անվանական (**Registered**)՝ արժեթերը գրանցված են սեփականատիրոջ անունով թողարկողի կամ թողարկողի ռեեստրվարի գրանցամատյաններում և կարող են փոխանցվել միայն գրանցված սեփականատիրոջ համաձայնության դեպքում -E-F-\*-R

**N**= Համակցված (**Bearer/Registered**)՝ արժեթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի փակ. -E-F-\*-N

**Z**= Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական (**Bearer depository receipt**)՝ ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական այն արժեթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթերի թողարկման երկրից դուրս. -E-F-\*-Z

**A**= անվանական դեպոզիտար ստացական (**Registered depository receipt**)՝ անվանական դեպոզիտար ստացական այն արժեթերի համար, որոնք թողարկվել են արտասահմանյան շուկայում արժեթերի առևտրի զարգացման նպատակով՝ արժեթերի թողարկման երկրից դուրս -E-F-\*-A

#### 1.1.2. Պարտքային գործիքներին CFI ծածկագրի շնորհումը.

##### Պարտքային գործիքներ ( DEBT INSTRUMENTS) -D-\*-\*\*-\*-

Ֆինանսական գործիքներ, որոնք հավաստիացնում են թողարկողի պարտքը սեփականատերերի նկատմամբ նախօրոք սահմանված պայմաններով:

**Խմբերը:** **B** = պարտատոմսեր (**Bonds**)

**C** = փոխարկվող պարտատոմսեր (**Convertible bonds**)

**W** = պարտատոմսեր, որոնց կցված են վարանտներ (**Bonds with warrants attached**)

**T** = միջնաժամկետ պարտատոմսեր (**Medium-term notes**)

**Y** = ֆինանսական շուկայի գործիքներ (**Money market instruments**)

**M = այլ /տարբեր/ (Others (Miscellaneous))**

**1.1.2.1. Պարտատոմսեր ( Bonds) D-B-\*-\*\*-**

Ցանկացած տոկոսային կամ զեղչված արժեթղթեր, որոնք պարտավորեցնում են թողարկողին պարտատոմսերի սեփականատերերին վճարել սահմանված գումարներ, ինչպես նաև մարել հիմնական գումարը:

**1-ին հատկանիշ՝ Տոկոսադրույքի տեսակը**

**F =** Ֆիքսված տոկոսադրույք (**Fixed rate**)՝ Տոկոսադրույքների բոլոր վճարումները հայտնի են թողարկման պահից և մնում են հաստատուն թողարկված արժեթղթի շրջանառության ժամկետի ողջ ընթացքում. -D-B-F-\*-\*\*-

**Z =** Զրոյական տոկոսադրույք / զեղչակտրոնային (**Zero rate / Discounted**)՝ Տոկոսադրույքի պարբերական վճարում չի իրականացվում, տոկոսադրույքի /զեղչակտրոնը/ դա մարման գումարի և ձեռքբերման գումարի տարբերությունն. -D-B-Z-\*-\*\*-

**V =** Փոփոխական տոկոսադրույքով (**Variable**) Տոկոսադրույքը կարող է փոփոխվել արժեթղթի շրջանառության ժամկետի ընթացքում. -D-B-V-\*-\*\*-

**2-րդ հատկանիշ՝ Երաշխիք** (Յույց է տալիս պարտավորումների թողարկման երաշխիքները թողարկողի լուծարման կամ սնանկության դեպքում):

**T =** Պետական / ֆինանսների նախարարության երաշխավորություն (**Government/Treasury guarantee** )՝ Պարտավորումը երաշխավորված է ֆեդերալ կամ տեղական կառավարման մարմնի կողմից.) -D-B-\*-T-\*-\*\*-

**G =** Երաշխավորված (**Guaranteed**)՝ Պարտավորումը երաշխավորվում է այլ միավորի կողմից, ոչ թողարկողի, և ոչ էլ ֆեդերալ կամ տեղական կառավարման մարմնի կողմից -D-B-\*-G-\*-\*\*-

**S =** -Ապահովված (**Secured**)՝ Պարտավորումների թողարկումը ապահովված է հատուկ ակտիվներով, որոնք գրավադրվում են ի ապահովումն պարբի վճարման, օրինակ՝ դեբիտորական պարտավորություններով, հիփոթեքով. -D-B-\*-S-\*-\*\*-

**U =** Զապահովված/չերաշխավորված (**Unsecured/unguaranteed** ) Թողարկողի պարտավորությունները հիմնված են միայն նրա ընդհանուր պարտքի վրա. -D-B-\*-U-\*-\*\*-

**3-րդ հատկանիշ՝ Մարում / Փոխհատուցում**

**F =** Ֆիքսված մարման ժամկետ (**Fixed maturity**) Հիմնական գումարը մարվում է մարման ժամկետի վերջում ամբողջությամբ -D-B-\*-\*\*F-\*-\*\*-

**G =** Հաստատուն մարման ժամկետ գնման հատկանիշով (**Fixed maturity with call feature**) Թողարկումը կարող է առաջադրվել մարման միայն մարման ժամկետի ավարտին -D-B-\*-\*\*G-\*-\*\*-

**C =** Հաստատուն մարման ժամկետ վաճառքի հատկանիշով (**Fixed maturity with put** ) Սեփականատերերը կարող է պարտավորումների արժեքի փոխհատուցում պահանջել միայն մարման ժամկետի ավարտին -D-B-\*-\*\*C-\*-\*\*-

**D =** Հաստատուն մարման ժամկետ գնման և վաճառքի հատկանիշով (**Fixed maturity with put and call**) -D-B-\*-\*\*D-\*-\*\*-

**A =** Ամորտիզացիոն պլան (**Amortization plan**) Հիմնական վճարումները կանոնավոր կերպով նվազեցվում են -D-B-\*-\*\*A-\*-\*\*-

**B** = Ամորտիզացիոն պլան գնման հատկանիշով (**Amortization plan with call feature**)  
 Հիմնական մարումը կարող է կատարվել որպես պարտատոմսերի չփոխհատուցված մասի  
 կանչման արդյունքում -D-B-\*-B-\*

**T** = Ամորտիզացիոն պլան վաճառքի հատկանիշով (**Amortization plan with put**) -D-B-\*-T-\*

**L** = Ամորտիզացիոն պլան գնման և վաճառքի հատկանիշով (**Amortization plan with put and call**) -D-B-\*-L-\*

**P** = Անժամկետ (**Perpetual**)՝ Պարտքային գործիքը չունի հաստատված մարման ժամկետ և կարող է մարվել միայն թողարկողի լուծարման դեպքում -D-B-\*-P-\*

**Q** = Անժամկետ գնման հատկանիշով (**Perpetual with call feature**)՝ Թողարկումը կարող է մարվել գնման միջոցով ապագայում -D-B-\*-Q-\*

**4-րդ հատկանիշ : Ձևը**

**B** = ըստ ներկայացնողի (**Bearer**) -D-B-\*-B

**R**= անվանական (**Registered**) -D-B-\*-R

**N**= Համակցված (**Bearer/Registered**)՝ արժեթղթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի տակ -D-B-\*-N

**Z**= Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական (**Bearer depository receipt**) -D-B-\*-Z

**A**= անվանական դեպոզիտար ստացական (**Registered depository receipt**) -D-B-\*-A

**1.1.2.2. Փոխարկվող պարտատոմսեր (Convertible bonds) -D-C-\*-\*-\***

Պարտատոմսեր, որոնք կարող են փոխարկվել այլ արժեթղթերի:

**1-ին հատկանիշ՝ Տոկոսադրույքի տեսակը**

**F** = ֆիքսված տոկոսադրույք (**Fixed rate**) -D-C-F-\*-\*

**Z** = 0-յական տոկոսադրույք / զեղչակտրոնային (**Zero rate / Discounted**) -D-C-Z-\*-\*

**V** = Փոփոխական տոկոսադրույքով (**Variable**) -D-C-V-\*-\*

**2-րդ հատկանիշ՝ Երաշխիք**

**T** = Պետական / ֆինանսների նախարարության երաշխավորություն (**Government/Treasury guarantee**) -D-C-\*-T-\*-\*

**G** = Երաշխավորված (**Guaranteed**) -D-C-\*-G-\*-\*

**S** = Ապահովված (**Secured**) -D-C-\*-S-\*-\*

**U** = Չապահովված/չերաշխավորված (**Unsecured/unguaranteed**) -D-C-\*-U-\*-\*

**3-րդ հատկանիշ՝ Մարում / Փոխհատուցում**

**F** = Ֆիքսված մարման ժամկետ (**Fixed maturity**) -D-C-\*-F-\*-\*

**G** = Հաստատուն մարման ժամկետ գնման հատկանիշով (**Fixed maturity with call feature**) -D-C-\*-G-\*-\*

**C** = Հաստատուն մարման ժամկետ վաճառքի հատկանիշով (**Fixed maturity with put**) -D-C-\*-C-\*-\*

**D** = Հաստատուն մարման ժամկետ գնման և վաճառքի հատկանիշով (**Fixed maturity with put and call**) -D-C-\*-D-\*-\*

**A** = Ամորտիզացիոն պլան (**Amortization plan**) -D-C-\*-A-\*-\*

**B** = Ամորտիզացիոն պլան գնման հատկանիշով

<b>(Amortization plan with call feature)</b>	-D-C-**-B*-
<b>T = Ամորտիզացիոն պլան վաճառքի հատկանիշով (Amortization plan with put)</b>	-D-B-**-T*-
<b>L = Ամորտիզացիոն պլան գնման և վաճառքի հատկանիշով (Amortization plan with put and call)</b>	-D-B-**-L*-
<b>P = Անժամկետ (Perpetual)</b>	-D-C-**-P*-
<b>Q = Անժամկետ գնման հատկանիշով (Perpetual with call feature)</b>	-D-C-**-Q*-

**4-րդ հատկանիշ : Ձևը**

<b>B = ըստ ներկայացնողի (Bearer)</b>	-D-C-**-*-B
<b>R= անվանական (Registered)</b>	-D-C-**-*-R
<b>N= Համակցված (Bearer/Registered)՝ արժեթղթերը թողարկվել են ըստ ներկայացնողի և անվանական ձևով և գրանցված են միևնույն նույնականացման համարի տակ.</b>	-D-C-**-*-N
<b>Z= Ըստ ներկայացնողի դեպոզիտար ստացական (Bearer depository receipt)</b>	-D-C-**-*-Z
<b>A= անվանական դեպոզիտար ստացական (Registered depository receipt)</b>	-D-C-**-*-A